Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 01-07-2020 թ. որոշմամբ
«ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹ.»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹ.
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ Կառավարական Տուն 2
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01069
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2009-03-02
1.5 ՀՎՀՀ-ն	02591798
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)60620514
	+(374)77495111
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	
1.8 Էլեկտրոնային փոստը	a.galstyan@mfa.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	0
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0
8. Ֆինանսավորման աղբյուրները՝	

8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ֆրանկոֆոնիայի միջոցառումների կազմակերպում	48000000
	Հիմնադրամի կանոնադրական նպատակների համար	10000000
	Բարեգործական ցուցահանդես-վաճառք	4998850
	ՖՄԿ տարեկան ծրագրեր	1875319

	Հիմնադրամի կանոնադրական նպատակների համար	194931
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Հիմնադրամի կանոնադրական նպատակների համար	2425900
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
		0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	0	0
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ֆրանկոֆոնիայի միջոցառումների կազմակերպում	48000000	
ՀՀ ԱԳՆ ընթացիկ ծրագրեր	40743000	
Հայր Մայրեր ՀԿ, հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ուսուցման ծրագիր	3750000	
Ընտանեկան զբաղվածության կենտրոն ՀԿ, հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ուսուցման ծրագիր	1250000	
ՀՀ ԱԳՆ ընթացիկ ծրագրեր	425000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	94168000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	94168000	

Նշումներ՝

Կից ներկայացվում է «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ աուդիտորական ընկերության կողմից տրված՝ Արտաքին հարաբերությունների աջակցության հիմնադրամի 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Գործունեության ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 5 թերթից:

թերթերի քանակը

GALSTYAN ARMENUHI 6503570104

Digitally signed by GALSTYAN ARMENUHI 6503570104
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••••, serialNumber=2e6270379d4a, cn=GALSTYAN ARMENUHI 6503570104
Date: 2020.07.14 18:20:48 +04'00'

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

PHP
PHP Partners

Փի-Էյչ-Փի Փարթնըրզ ՓԲԸ
PHP PartnersCJSC

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Այեք Մանուկյան 15ա
Registration address: 15a Alek Manukyan, Yerevan
Գործունեության հասցե՝ ՀՀ, Երևան, Ադոնցի 2, Երազ բիզնես կենտրոն
Activity address: 2 Adonts str., Yeraz Business Centre, Yerevan, Armenia

Հեռ. *Tel.* (+374)10204090
Էլ-փոստ *E-mail* *general@php.am*

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտաքին հարաբերությունների աջակցության հիմնադրամի գործադիր տնօրենին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Արտաքին հարաբերությունների աջակցության հիմնադրամի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Գործունեության ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև կից ծանոթագրությունները:

Մեր կարծիքով կից հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Գործունեության ֆինանսավորման աղբյուրները, դրանց օգտագործումը և դրամական միջոցների հոսքերը՝ *Ֆինանսական հաշվետվողականությունն ըստ հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի* Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտների համաձայն մեր պատասխանատվությունը ներկայացվում է ստորև՝ մեր Հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* պարբերությունում: Մենք հանդիսանում ենք Հիմնադրամից անկախ աուդիտորներ՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնագրքի: Մենք կարծում ենք, որ մեր կողմից հավաքագրված աուդիտորական ապացույցները բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքները լուսաբանող պարագրաֆ. օգտագործման և բաշխման սահմանափակում

Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծանոթագրություն 2(ա)-ում ներկայացված հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների հաշվապահական հաշվառման հիմունքի վրա: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տեղեկատվություն տրամադրելու նպատակով՝ օժանդակելու նրանց գնահատել Հիմնադրամի գործունեությունը: Արդյունքում, հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող տեղին լինել մեկ այլ նպատակի համար: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի առումով:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 2 (ա)-ում, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի ներդրման համար, որը ղեկավարության կարծիքով անհրաժեշտ է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են կեղծիքի, թե սխալի հետևանքով:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Հովհաննես Պետրոսյան
Տնօրեն

Լիլիթ Մինասյան
Աուդիտորական ծառայությունների
ղեկավար

«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ
05 հունիսի 2020թ.

Հազ. դրամ	Ծնթգ.	2019թ.	2018թ.
Սկզբնական մնացորդ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		31,214	74,978
		31,214	**74,978**
Մուտքեր			
Նվիրատվություն ֆինանսական հաստատությունից		48,000	-
Նվիրատվություն ոչ առևտրային կազմակերպությունից		10,000	-
ՀՀ ոչ առևտրային կազմակերպությունների աջակցության նպատակով ստացված գումարներ	4	4,999	48,209
Նվիրատվություն ՀՀ պատվավոր հյուպատոսներից		2,426	46,666
Ֆրանկոֆոնիայի միջոցառումների կազմակերպման համար ստացված գումարներ	5	-	389,131
ՀՀ դիվանագիտական ծառայությունների համար ստացված գումարներ	6	-	107,664
Ստացված անտոկոս փոխառություն	7	-	48,000
Այլ		2,070	498
		67,495	**640,168**
Արտարժույթի վերահաշվարկման փոխարժեքային տարբերություններ		**(1,103)**	**(6,515)**
Ծախքեր			
Փոխառության հետվերադարձ	7	48,000	-
ՀՀ արտաքին գործերին աջակցության շրջանակում կատարված ծախքեր	8	40,743	62,350
Տրամադրված դրամաշնորհներ ոչ առևտրային կազմակերպությունների վերանորոգման նպատակով	9	5,425	47,162
ՀՀ դիվանագիտական ծառայությունների հիմնադրման և պահպանման ծախքեր	10	-	117,207
Ֆրանկոֆոնիայի շրջանակում կատարված ծախքեր	11	-	450,698
		94,168	**677,417**
Վերջնական մնացորդ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		3,438	31,214
		3,438	**31,214**

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Արտաքին հարաբերությունների աջակցության հիմնադրամի ղեկավարության կողմից և ստորագրվել են ղեկավարության անունից 2020 թվականի հունիսի 5-ին:

Արմենուհի Գալստյան
Գործադիր տնօրեն

Արթուր Պետրոսյան
Գլխավոր հաշվապահ

1 Կազմակերպությունը և կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունը

Արտաքին Հարաբերությունների Աջակցության Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2009թ. փետրվարի 23-ին:

Հիմնադրամի գործունեության նպատակներն են աջակցել Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերությունների իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Հիմնադրամի շահառուներն են Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ արտաքին գործերի նախարարության և այլ պետական հիմնարկների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց գործունեությունը համապատասխանում է Հիմնադրամի նպատակներին և խնդիրներին:

Հիմնադրամի մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը և գործադիր տնօրենը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հանդիսանում է Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը: Հոգաբարձուների խորհրդի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ արտաքին գործերի նախարարը:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն՝ հիմնվելով *Ֆինանսական հաշվետվողականությունն ըստ հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի* Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ) վրա:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են հետևյալ հաշվետվություններից՝

- Գործունեության ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն,
- Կից ծանոթագրությունները:

Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն գործառնությունները և դեպքերը ճանաչվում են դրամական միջոցների ստացման կամ դրամական միջոցներով վճարման պահին.

(բ) Հաշվետվության արժույթ

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների արժույթը ՀՀ դրամն է: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

(ա) Արտարժույթով գործարքներ

Որոշ դոնորներից Հիմնադրամը ստանում է դրամաշնորհներ արտարժույթով: Ստացված արտարժույթը Հիմնադրամը փոխարկում է ՀՀ դրամի և փոխանցում ստացված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը հաշվետու ամսաթվին վերահաշվարկվում է ԱՄՆ դոլարով՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կոմից հրապարկված փոխարժեքների վրա:

(բ) Հարկեր

Կիրառվող բոլոր հարկային պարտավորությունները հաշվարկվել և վճարվել են ՀՀ հարկային կանոնակարգերին համապատասխան:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 14.07.2020 18:15